ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1220 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի N 638-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 16-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2011 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհուրդ ստեղծելու և դրա գործունեության կարգը հաստատելու մասին» N 638-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) նախաբանում «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրով սահմանված կարգի 121-րդ կետի 2-րդ ենթակետը» բառերը փոխարինել «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 16-րդ մասը» բառերով:

2. Որոշման 2-րդ կետով հաստատված N 2 հավելվածի՝

1) ամբողջ տեքստում «հասարակական կազմակերպություններ» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «ոչ առևտրային կազմակերպություններ» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով.

2) 6-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) ներդրումների և գործարար միջավայրի ոլորտներում Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեությունը և ընթացիկ հարցերը համակարգող փոխվարչապետը (այսուհետ՝ փոխվարչապետ).».

3) 6-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՆԱԿ) գործադիր տնօրենը (համաձայնությամբ).».

4) 8-րդ կետի 3-րդ ենթակետում «կողմից ֆինանսավորվող գործարարության աջակցման գրասենյակի» բառերը և 38-րդ կետի 4-րդ ենթակետում «կողմից ֆինանսավորվող գործարարությանն աջակցման գրասենյակի» բառերը փոխարինել «աջակցությամբ գործող Հայաստանի ներդրումային խորհրդի» բառերով.

5) 9-րդ կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ենթախորհրդի կազմում ընդգրկվում են Խորհրդի անդամները՝ բացառությամբ փոխվարչապետի:».

6) 38-րդ կետի 3-րդ ենթակետում և 41-րդ կետի 2-րդ ենթակետում «ՓՄՁ ԶԱԿ-ի» բառերը փոխարինել «ՆԱԿ-ի» բառերով.

7) 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15. Խորհրդի կազմում՝ որպես գործարար համայնքի շահերը ներկայացնող անդամներ ընդգրկվելու հայտ կարող են ներկայացնել այն ոչ առևտրային կազմակերպությունները և առևտրաարդյունաբերական պալատները՝

1) որոնց գործունեության հիմնական նպատակն է գործարար միջավայրի զարգացումը Հայաստանի Հանրապետությունում, կամ

2) որոնք ունեն մասնավոր-պետություն երկխոսության/համագործակցության շրջանակներում գործունեության կամ նախագծերի իրականացման առնվազն մեկ տարվա փորձ:»:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո քառասուն օրվա ընթացքում կազմակերպել որոշմամբ սահմանված խորհրդի նոր կազմի ձևավորումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

18.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ